

**ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի կիրառման  
դյուրինությունը  
Դավիթ Հակոբյան**

## Անոտացիա

Պետական գնումների համակարգն առանցքային դերակատարություն և նշանակություն ունի յուրաքանչյուր պետության և շուկայական տնտեսության համակարգում: Պետության կողմից իրականացվող գնումների արդյունավետ, հուսալի և մատչելի համակարգի ձևավորումը, ինչը երաշխավորում է հանրային միջոցների առավել արդյունավետ և խնայողաբար օգտագործում, բոլոր ժամանակների և պետությունների տնտեսական կայունության ապահովման գրավականներից է:

ՀՀ պետական գնումների համակարգում շարունակաբար իրականացվել և իրականացվում են մի շարք բարեփոխումներ, ներդրվել է նաև գնումների էլեկտրոնային համակարգ, սակայն, այնուամենայնիվ, պետք է նշել, որ պետական գնումների համակարգում դեռևս աչքի են ընկնում այնպիսի թերություններ, ինչպիսիք են թափանցիկության, հրապարակայնության և մրցակցության ցածր մակարդակը, իսկ գնումների էլեկտրոնային համակարգը դեռևս օգտատերերի համար հանրաճանաչ չէ, խրթին է և դժվարամատչելի:

Պետական գնումների համակարգի արդյունավետության բարձրացմանն աջակցելու նպատակադրությամբ սույն հետազոտության շրջանակներում թիրախավորվել են ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի կիրառման դյուրինության ուսումնասիրությունը և դրանց մատչելիության բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

Կարծում եմ, որ հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ արձանագրված բացահայտումները և արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ Ֆինանսների նախարարությունում բարեփոխումների շրջանակներում մշակվող մոտեցումներում: ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգի մատչելիության բարձրացման ուղղությամբ ներկայացված առաջարկությունները, որոնք նշված են աշխատանքում, էապես կբարձրացնեն համակարգի արդյունավետության մակարդակը:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անոտացիա.....	2
Ներածություն.....	4
Նախաբան .....	7
Գլուխ 1. ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի կիրառման դյուրինության վերաբերյալ հիմնական բացահայտումներ.....	12
Գլուխ 2. Էլեկտրոնային համակարգերի միջոցով պետական գնումներին մասնակցելու դրդապատճառները.....	16
Եզրակացություն .....	18
Առաջարկություններ .....	20
Հավելված 1. Ֆոկուս խմբային և ոլորտային քննարկումների հարցադրումներ.....	21
Հավելված 2. Անհատական կիսաստանդարտացված հարցազրույցների հարցադրումներ .....	25
Գրականություն .....	27
Աբստրակտ .....	28
Abstract .....	28

# Ներածություն

## Հետազոտության թեմայի արդիականությունը

Պետական գնումների համակարգն առանցքային դերակատարություն և նշանակություն ունի յուրաքանչյուր պետության և շուկայական տնտեսության համակարգում, որի հիմնական խնդիրը հասարակական և պետական կարիքների բավարարումն է: Պետական գնումների համակարգի նպատակային կառուցվածքն ու կայացվածությունն են մեծապես պայմանավորում նաև բյուջետային ծախսերի արդյունավետությունը: Պետական գնումների գործարքները կազմում են յուրաքանչյուր երկրի ՀՆԱ-ի և պետական բյուջեի ծախսի մեծ մասը: Ծախսերի այս մակարդակը միայն ծանրակշիռ պատճառ է պետական գնումների գործարկման արդյունավետությունը վերլուծելու համար:

Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին ՀՀ պետական գնումների համակարգում իրականացվել են մի շարք բարեփոխումներ, որոնց հիմքում դրվել են շուկայական տնտեսվարման սկզբունքները, այնուամենայնիվ պետք է նշել, որ պետական գնումների համակարգում դեռևս աչքի են ընկնում այնպիսի թերություններ, ինչպիսիք են թափանցիկության, հրապարակայնության և մրցակցության ցածր մակարդակը, իսկ գնումների էլեկտրոնային համակարգը դեռևս օգտատերերի համար հանդիսանում է ոչ հանրաճանաչ, խրթին և դժվարամատչելի: Մինևույն ժամանակ պետական ֆինանսական ռեսուրսների սահմանափակ լինելը պահանջում է բյուջետային միջոցների առավել արդյունավետ և խնայողաբար օգտագործում: Դա, ի թիվս այլ խնդիրների, ենթադրում է պետական գնումների համակարգի բարեփոխում, որը հիմնված կլինի պետական կարիքների բավարարման գործընթացի համար պետական գնումների համակարգում որակական փոփոխությունների իրականացման, ինստիտուցիոնալ միջավայրի բարեփոխման վրա:

## Հետազոտության նպատակը և խնդիրները

**Հետազոտության նպատակն է** ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի կիրառման դյուրինության ուսումնասիրությունը և դրանց մատչելիության բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

**«Դյուրինություն»** հասկացությունը հետազոտության շրջանակներում դիտարկվել է որպես պետական գնումների կազմակերպման ընթացակարգերի կիրառման և գործընթացների կազմակերպման տեսանկյունից էլեկտրոնային համակարգերի նպատակայնության և արդյունավետության մակարդակ:

**«Մատչելիություն»** հասկացությունը, սույն հետազոտության նպատակներից ելնելով, դիտարկվել է որպես օգտագործողի համար հարմար ծրագրային ինտերֆեյսի (ծրագրերի համակարգ) առկայություն, որը հեշտ է օգտագործել: Հարմար (user friendly) նշանակում է՝ օգտագործողի համար այն դժվար չէ սովորել կամ հասկանալ: Հարմարը դիտարկվել է մի քանի ընդհանուր հատկանիշներից ելնելով՝

- 1) **Պարզ.** օգտագործողի համար հարմար ինտերֆեյսի առկայությունը, որը կիրառման և օգտագործման համար բարդ չէ: Այն պարզ է, ապահովում է արագ մուտք դեպի ընդհանուր հատկանիշներ կամ հրամաններ:
- 2) **Մաքուր.** լավ կազմակերպված ինտերֆեյսի առկայություն, ինչը հեշտացնում է տարբեր գործիքների և տարբերակների տեղորոշումը:
- 3) **Ինտուիտիվ.** օգտագործողի համար հարմար լինելու նպատակով ինտերֆեյսը պետք է

ինաստալից լինի սովորական օգտագործողի համար և պետք է նվազագույն բացատրություն պահանջի այն օգտագործելու համար:

- 4) **Հուսալի.** Ինտերֆեյսը չպետք է օգտագործողի մոտ վրդովմունք կամ բացասական հույզեր առաջացնի:

Նպատակին հասնելու համար հետազոտության հիմքում դրվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

1. ուսումնասիրել ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի (<https://www.gnumner.am/>, <https://www.armeps.am/>, <https://www.ppcm.am/>) կիրառման դյուրինությունը երեք օգտատերերի՝ արտադրողների, սպառողների և վերահսկողների տեսանկյունից.
  - 1.1. արտադրողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի կառույցների գնումների մասնագետները, որոնք մշակում են գնումների փաթեթները և տեղադրում պետական գնումների էլեկտրոնային հարթակներում,
  - 1.2. սպառողներն են գնումներին մասնակցող մասնավոր հատվածը, որոնք, օգտվելով պետական գնումների էլեկտրոնային համակարգերից, մասնակցում են գնումների գործընթացին:
  - 1.3. վերահսկողներն են ՋԼՄ/ՔՀԿ ներկայացուցիչները, որոնք ուսումնասիրում, մշտադիտարկում և լուսաբանում են գնումների գործընթացները,
2. ուսումնասիրել պետական գնումներին մասնակցելու և չմասնակցելու մոտիվացիաներն ու պատճառները,
3. մշակել ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի մատչելիության բարելավմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:

### **Հետազոտության օբյեկտը և առարկան**

*Հետազոտության օբյեկտներն են՝*

- 1) տարբեր պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի կառույցների գնումների մասնագետները,
- 2) պետական գնումներին մասնակցող և չմասնակցող մասնավոր հատվածը,
- 3) ՋԼՄ/ՔՀԿ ներկայացուցիչները, որոնք հետաքրքրված են պետական գնումների գործընթացով:

*Հետազոտության առարկան* ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի կիրառման դյուրինությունն ու մատչելիությունն են:

### **Հետազոտության տեսական և տեղեկատվական հիմքերը**

Աշխատանքի տեսական և տեղեկատվական հիմքը կազմել են պետական գնումների ոլորտին վերաբերվող ՀՀ օրենքներն ու իրավական ակտերը, գնումների էլեկտրոնային հարթակները: Ուսումնասիրության համար տեսական հիմք են ծառայել տարբեր հետազոտողների աշխատությունները, միջազգային կազմակերպությունների և փորձագետների հետազոտությունների արդյունքներն ու հրապարակումները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալները, ինչպես նաև վերը նշված կառույցների էլեկտրոնային կայքերում տեղ գտած տեղեկատվությունը:

### **Հետազոտության մեթոդաբանությունն ու ընտրանքը**

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են ֆոկլուս խմբային քննարկումների, անհատական կիսաստանդարտացված հարցազրույցների, ինչպես նաև տարածաշրջանային մակարդակում կազմակերպված ոլորտային քննարկումների (Town hall meeting) մեթոդները:

Հետազոտությունն իրականացվել է որակական մեթոդների կիրառմամբ՝ ֆոկլուս խմբային և ոլորտային քննարկումներ, անհատական կիսաստանդարտացված հարցազրույցներ, իսկ ընտրանքը՝ կիրառելի չէ: Միևնույն ժամանակ ապահովվել է հետազոտության առարկային առնչվող բոլոր թիրախների ներգրավվածությունը՝ արտադրողների, սպառողների և վերահսկողների: Իրականացվել են երկու տարածաշրջանային ոլորտային քննարկումներ (Town hall meeting). առաջինը՝ ՀՀ հյուսիսային, իսկ երկրորդը՝ հարավային մարզերի Տեղական ինքնակառավարման մարմինների, Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) և մասնավոր հատվածի ընկերությունների գնումների մասնագետների մասնակցությամբ: Իրականացվել են երկու ֆոկլուս խմբային քննարկումներ կենտրոնական մարզերի մասնավոր հատվածի ընկերությունների և պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գնումների մասնագետների մասնակցությամբ: Իրականացվել են նաև ֆոկլուս խմբային քննարկումներ ՀՀ տարբեր մարզերը ներկայացնող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ: Հետազոտության իրականացման որակական մեթոդների շրջանակներում իրականացվել են նաև անհատական կիսաստանդարտացված հարցազրույցներ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի կառույցների գնումների մասնագետների հետ:

Վերոնշյալ որակական մեթոդների համադրումն ու վերլուծությունը հնարավորություն են տվել որակական տվյալներ հավաքագրել գնումների էլեկտրոնային համակարգին վերաբերող գործընթացների վերաբերյալ:

### **Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը**

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ արձանագրված արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ ֆինանսների նախարարությունում բարեփոխումների շրջանակներում մշակվող մոտեցումներում: ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգի մատչելիության բարձրացման ուղղությամբ առաջարկությունները, որոնք նշված են աշխատանքում, էապես կբարձրացնեն համակարգի արդյունավետության մակարդակը:

### **Հետազոտության կառուցվածքը և ծավալը**

Հետազոտությունը կազմված է նախաբանից, երկու գլուխներից, եզրակացությունից և առաջարկություններից, հետազոտված օրենքների և այլ իրավական ակտերի ցանկից:

## Նախարան

ՀՀ-ում պետական, այդ թվում՝ էլեկտրոնային գնումները, կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով<sup>1</sup>, ՀՀ Կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգով»<sup>2</sup> և «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշմամբ<sup>3</sup>, «Պետական գնումների մասին» համաձայնագրով<sup>4</sup>:

ՀՀ Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1916-Ն որոշմամբ սահմանվել է էլեկտրոնային եղանակով գնումների կատարման կարգը: Եվ 2012 թվականի հունվարի 1-ից ՀՀ համապետական գործադիր մարմինները, տարածքային կառավարման մարմինները և պետության հիմնարկները բաց ընթացակարգով գնումները կատարում են էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրումը ենթադրում է գնումների գործընթացի հնարավորինս ավտոմատացում, ինչը պարունակում է պետական ծախսերի կառավարման արդյունավետությանը նպաստելու իրական ներուժ: Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման բարեփոխումներն էլեկտրոնային կառավարման համակարգի բարեփոխումների բաղկացուցիչն են:

Էլեկտրոնային գնումներն իրականացվում են Armepps ([www.armepps.am](http://www.armepps.am)) համակարգի միջոցով: Էլեկտրոնային գնումների համակարգն ունի հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները կողավորելու և մինչև հայտերի բացման պահին այդ տվյալների ապակողավորման անհնարինությունն ապահովելու հնարավորություն: Գնումներին մասնակցելիս մասնակիցն իրավունք ունի էլեկտրոնային եղանակով

- 1) ստանալ հրավեր,
- 2) ստանալ ծանուցում,
- 3) ներկայացնել հայտ,
- 4) ներկայացնել պարզաբանում ստանալու պահանջ:

Էլեկտրոնային գնումը ներառում է էլեկտրոնային եղանակով գնման ընթացակարգի իրականացումը և ծանուցումների տրամադրումը: Համակարգից օգտվողներն են՝

- 1) պատվիրատուի ղեկավարը (համակարգում՝ ՊՊԳՀ), որը համակարգում գրանցում է նոր օգտվողներ և համակարգի միջոցով հաստատում է գնահատման մասին հաշվետվությունը,

---

<sup>1</sup> ՀՀ Ազգային ժողով, 2016: ՀՀ օրենքը գնումների մասին, Երևան

<https://www.arlis.am/documentview.aspx?docID=110820>

<sup>2</sup> ՀՀ Կառավարություն, 2017: ՀՀ Կառավարության որոշում N 526-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», Երևան

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=113367>

<sup>3</sup> ՀՀ Կառավարություն, 2017: ՀՀ Կառավարության որոշում N 386-Ն «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

<https://www.arlis.am/documentview.aspx?docid=112885>

<sup>4</sup> Համաձայնագիր պետական գնումների մասին

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=80573>

2) գնահատող հանձնաժողովը (համակարգում՝ ՊՊԳՊ),

3) գնումների համակարգողը (համակարգում՝ ՊՊԳՀԱ):

Գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնման գործընթացի կազմակերպման ժամանակ գնահատող հանձնաժողովը բաղկացած է առնվազն հինգ անդամից՝ երկու բացող (համակարգում՝ ԲԱ) և առնվազն երեք գնահատող անդամից (համակարգում՝ ԳԱ): Ընդ որում, գնահատող անդամներից մեկը հանձնաժողովի նախագահն է (համակարգում՝ ԳԱՊ): Գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար (համակարգում՝ ՄՀՄ), որը հանձնաժողովի անդամ չէ: Պատվիրատուն համակարգում գրանցվելու և այն շահագործելու նպատակով գրավոր եղանակով լիազորված մարմին է ներկայացնում պատվիրատուի

1) անվանումը՝ հայերենով, ռուսերենով և անգլերենով,

2) գործունեության հասցեն՝ հայերենով, ռուսերենով և անգլերենով,

3) ղեկավարի անունը, ազգանունը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

ARMEPS էլեկտրոնային համակարգում առկա են հետևյալ դաշտերն ու հնարավորությունները.

1) ՄՀ՝ մրցույթի հրավեր, հանրային գնման մրցույթի հրավեր,

2) captcha կոդ՝ ստուգման կոդ, որը բացառում է համակարգչի կամ ռոբոտի գրանցման հավանականությունը,

3) ՄՀ արխիվացված ցուցակ՝ ավարտված ՄՀ-ների ցուցակ՝ արխիվացված գործածողի կողմից,

4) հայտի փաթեթ՝ մասնակցի պատասխանն է (առաջարկ) մրցույթի հրավերին,

5) թվային ստորագրություն՝ եզակի ֆայլ, որը գեներացվում է հայտի փաթեթի բովանդակության և ստեղծման ամսաթվի հիման վրա,

6) գնային առաջարկ՝ ներկայացված մրցակցային գնառաջարկ,

7) հայտի փաթեթավորում մեկ ծրարով. յուրաքանչյուր հայտ ներկայացվում է մի ծրարի մեջ: Ծրարի բացումը կատարվում է հայտի բոլոր բաժինների համար միաժամանակ (որակավորության չափանիշ, տեխնիկական ծրար ու ֆինանսական ծրար),

8) հայտի փաթեթավորում երկու ծրարով. յուրաքանչյուր հայտ ներկայացվում է երկու առանձին ծրարների մեջ: Նախ բացվում է որակավորության չափանիշ և տեխնիկական ծրար պարունակող առաջին ծրարը, իսկ ֆինանսական ծրարը բացվում է միայն այն մատակարարների համար, որոնք հաջողությամբ անցել են առաջնային ծրարի փուլը:

ARMEPS համակարգն օգտագործելու համար բոլոր տնտեսական կառույցները կարող են գրանցվել ինքնուրույն: Համակարգում որպես մասնակից գրանցվելու նպատակով մասնակիցը մուտք է գործում [www.armeps.am](http://www.armeps.am) կայք և լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը, որից հետո գրանցումը հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված թվի և (կամ) տառերի կոմբինացիան (այսուհետ՝ տեղեկատվություն) մուտքագրում է համակարգ: Տեղեկատվությունը ճիշտ մուտքագրելուց հետո մասնակիցը համարվում է համակարգում գրանցված, ինչի մասին ավտոմատ եղանակով ստանում է ծանուցում: Մասնակցի գրանցումն ավտոմատ կերպով չեղարկվում է, եթե համակարգում գրանցվելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում վերջինս մուտք չի գործում համակարգ կամ մուտք է գործում,



սակայն համակարգ չի մուտքագրում տեղեկատվությունը: Այս պարագայում իրականացվում է գրանցման նոր գործընթաց:

Պատվիրատուն համապատասխան գնում կատարելու համար համակարգում հրապարակում է գնման ընթացակարգի մասին հայտարարության և հրավերի տեքստերը՝ դրանք նույն օրը հրապարակելով նաև տեղեկագրում: Գնահատող հանձնաժողովի կողմից հաստատվող գնման հայտարարությունը և հրավերը պարտադիր պարունակում է տեղեկատվություն տվյալ գնման ընթացակարգի՝ էլեկտրոնային եղանակով իրականացման, ինչպես նաև հայտերի՝ էլեկտրոնային եղանակով ներկայացման վերաբերյալ:

Հրավերով նախատեսվում է, որ

- 1) բացառությամբ օրենքով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին,
- 2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Համակարգում հանձնաժողովի բացող անդամների գործառույթներն աստիճանակարգված են: Աստիճանակարգումը որոշվում է գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից: Գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնվում է հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝ հաշվետվություն), որը հայտերի բացման օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ուղարկում է մասնակիցների էլեկտրոնային փոստերին:

Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու համար գնահատող հանձնաժողովի նախագահն ավտոմատ կերպով ստեղծում է հայտերի գնահատման մասին արձանագրություն, որը համակարգում հաստատվում է գնահատող հանձնաժողովի անդամների կողմից՝ համակարգում նշում կատարելու միջոցով: Ընտրված մասնակցին որոշելու նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը

- 1) համակարգում նշում է ընթացակարգի բավարար գնահատված մասնակիցներին՝ նրանց դասակարգելով ըստ գնահատման արդյունքների և գնային առաջարկների,
- 2) համակարգի միջոցով ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային փոստին ուղարկում է գնահատման արդյունքների մասին հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկ տրամադրված

լինելու մասին: Պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկն ստացած մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը: Պայմանագիրը կնքելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգում ավարտում է ընթացակարգը: Պատվիրատուն գնման ընթացակարգի վերաբերյալ արձանագրությունը կազմում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնման գործընթացների առավել թափանցիկ և հրապարակային հիմունքներով կազմակերպումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ նախատեսվել է հայտերի բացման նիստի արձանագրությունների, ինչպես նաև բողոքարկման խորհրդի կողմից ընդունված որոշման կատարման մասին պատվիրատուի ներկայացրած տեղեկատվության հրապարակում [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում: Կայքն ունի հետևյալ բաժինները՝

- 1) *Օրենսդրություն* բաժնում տեղակայված են նյութեր, որոնք կարող են օգտակար լինել գնումների մասնակից բոլոր շահագրգիռ կողմերի համար: Տեղեկատվությունը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝ օրենքներ, միջազգային պայմանագրեր, ձևանմուշներ, ուղեցույցներ, ձեռնարկներ և այլն:
- 2) *Գնումների պլաններ* բաժնում ներկայացված են տարբեր կառույցների գնումների պլանները, այդ թվում՝ առևտրային, ոչ առևտրային կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնադրամների և այլն:
- 3) *Հանձնաժողովի նիստերի արձանագրություններ* բաժնում տեղակայված են հայտերի բացման և հայտերի գնահատման նիստի արձանագրությունները:
- 4) *Հաշվետվություններ* բաժնում տեղակայված են գնումների տարեկան հաշվետվությունները՝ ըստ տարեթվերի:
- 5) *Մոնիթորինգ* բաժնում տեղակայված են մոնիթորինգի հաշվետվությունները՝ ըստ տարեթվերի՝ եզրակացություններով ու պարզաբանումներով:
- 6) *Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ* բաժնում տեղակայված են համապատասխան ծանուցումները՝ ըստ տարեթվերի:
- 7) *Շահերի բախման բացակայությունների և իրական շահառուների մասին տվյալներ* բաժնում ներկայացված են ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի շահերի բախման բացակայության մասին հայտարարություններն ու ծածկագրով գնման ընթացակարգի իրական շահառուների մասին տեղեկատվությունը:
- 8) *Պայմանագրում կատարված փոփոխություններ* բաժնում ներկայացված են պայմանագրերում կատարված փոփոխությունները:
- 9) *Բողոքարկում* բաժնում ներկայացված են բողոքարկման խորհրդի գործունեության կարգը, բողոքների վերաբերյալ հայտարարությունները, խորհրդի նիստերի անցկացման օրվա և ժամի վերաբերյալ տեղեկատվությունը, բողոքների վերաբերյալ կայացած որոշումները, խորհրդի անդամների շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները, տեղեկատվություն բողոքարկման խորհրդի կողմից կայացված որոշումների կատարման մասին, բողոքարկման խորհրդի գործունեության տարեկան հաշվետվությունները:
- 10) *Հանրային հսկողության վերաբերող նյութեր*
- 11) *Գնումների հայտարարություններ*. այստեղ են տեղակայված բոլոր գնումների

հայտարարությունները, այդ թվում՝ էլեկտրոնային աճուրդի: Գնումների հայտարարությունները ներառում են գնման վերնագիրը, հրապարակման ամսաթիվը ու դիմելու/հայտ ներկայացնելու վերջնաժամկետը:

- 12) *Որակավորում* բաժինը տեղեկատվություն է տրամադրում որակավորման ու վերապատրաստումների վերաբերյալ:

Կայքերն ունեն նաև տեղեկատվական/ուսուցողական նյութեր ու հոլովակներ, որոնք միտված են աջակցել օգտատերերին տարբեր փուլերում համակարգերից օգտվելու հարցում:

# **Գլուխ 1. ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի կիրառման դյուրինության վերաբերյալ հիմնական բացահայտումներ**

ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի կիրառման դյուրինության գործընթացն ուսումնասիրվել է գնումների տարբեր փուլերում էլեկտրոնային համակարգից օգտվելու իրական փորձառության համատեքստում՝ սկսած գրանցումից ընդհուպ մինչև պայմանագրի կնքում ու բողոքարկում:

## **Գրանցում**

Գրանցման փուլը արտադրողների՝ գնումների հայտարարող կողմի համար եղել է հարթ, առանց հատուկ խոչընդոտների: Նույնը չի կարելի ասել սպառողների խմբի ներկայացուցիչների պարագայում: Քննարկումներին մասնակցած մասնավոր հատվածի ու քաղաքացիական հասարակության կառույցների մեծամասնությունը նշեց, որ գրանցման ընթացքում բախվել են տարբեր խնդիրների՝ սկսած դաշտերում պահանջվող տեղեկատվության տեսակի պահանջը չհասկանալը ընդհուպ մինչև գրանցման ակտիվացումը հավաստող էլեկտրոնային նամակի չստանալը, ինչը հանգեցրել է գրանցման գործընթացի դադարեցմանն ու մրցույթին մասնակցելու անհնարինությանը: Հարկ է նշել, որ հիմնականում բարդությունների են բախվել համեմատաբար փոքր ու նորաստեղծ կազմակերպությունները, որոնց համար մրցույթին մասնակցելու փորձառությունը առաջինն է եղել:

*«Մենք գրանցման հետ կապված բոլոր փուլերն անցանք, իսկ կողը պարունակող նամակը մինչ օրս չենք ստացել»:*

*Մասնավոր հատվածի ներկայացուցիչ*

*«Գրանցման ժամանակ մենք չէինք կարողանում հասկանալ, թե արդյոք մենք մատակարար ենք, քանի որ մենք դրամաշնորհային մրցույթի էինք ուզում մասնակցել ու ըստ մեզ՝ մենք մատակարար չենք»:*

*ՔՀԿ ներկայացուցիչ*

Գրանցման փուլում արտադրողները կարողացել են խնդիրների մի մասը հաղթահարել ինքնուրույն կամ դիմել են ավելի հմուտ գործընկերների, ինչպես նաև գնումները տեղադրող կողմի լիազորված ներկայացուցիչների աջակցությանը:

## **Բաց մրցույթների ու աճուրդների վերաբերյալ տեղեկատվություն**

Սպառողները մրցութային հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ստանում են ինչպես համապատասխան կայքերը պարբերաբար դիտարկելու, բանավոր հաղորդակցության կամ շփումների, այնպես էլ ծանուցումների միջոցով: Հարկ է նշել, որ վերջին տարբերակից օգտվողներն այն համարում են ոչ հուսալի, քանի որ ոչ միշտ են ստանում ավտոմատացված նամակներ նոր մրցույթների վերաբերյալ: Միննույն ժամանակ, անգամ մրցույթի հնարավորության մասին տեղեկացվելիս անհրաժեշտ տեղեկատվություն գտնելը բարդ է՝ որոնման համակարգի անարդյունավետության պատճառով:

*«Նոր հնարավորությունների համար հույսը դնել էլ. փոստին համակարգից ստացած ծանուցումների վրա, չի կարելի, ամբողջական չի գալիս, ու թղթայինները դուրս են մնում: Ամենօրյա ռեժիմով պետք է ստուգել պաշտոնական տեղեկագիրը»:*

## Հայտի ներկայացում

Ինչպես գրանցման, այնպես էլ հայտի ներկայացման փուլում արտադրողների մեծ մասը զգալի խնդիրներ չի ունենում: Արձանագրված խնդիրները հիմնականում վերաբերվում են կապի որակին կամ կառույցների թույլ տեխնիկական հագեցվածությանը և կարողություններին:

Սպառողների խմբի փորձառությունն այս փուլում միանշանակ չէ: Վերջիններս նշել են, որ այս փուլը գնման ողջ գործընթացի համար ամենաբարդն է: Հիմնական խնդիրները հետևյալն են.

- 1) Որոնման համակարգը թույլ չի տալիս արդյունավետ ու արագ գտնել մրցույթի հրավերները, որոնցում տվյալ սպառողն ունի հետաքրքրություն: Որոնման համակարգը արձագանքում է միայն մրցույթին վերաբերվող հայտարարության վերնագրում առկա բառերին ու բառակապակցություններին, ինչը որոնումը դարձնում է ժամանակատար ու անարդյունավետ:
- 2) Մրցույթի հրավերում պայմանները որոշ դեպքերում հստակ չեն ձևակերպված կամ բացակայում են, ինչը հանգեցնում է տարընթերցումների ու հետևաբար մրցույթին մասնակցելու ու շահելու հավանականության նվազեցմանը:
- 3) Դրամաշնորհային մրցույթին մասնակցելու պայմաններն ու չափորոշիչները հստակ չեն, երկար ու խրթին են, ինչը բարդացնում է մրցունակ հայտ մշակելու ու ներկայացնելու հնարավորությունը:
- 4) Կայքում տեխնիկական խնդիրների պատճառով լինում են դեպքեր, երբ չի կցվում սպառող կազմակերպության հայտը, մինչդեռ սպառողի համար համակարգն արձանագրում է գործընթացի հաջողված ավարտ:
- 5) Կայքի գերձանրաբեռնվածության արդյունքում հնարավոր չի լինում ավարտել հայտը ներկայացնելու գործընթացը, որի արդյունքում սպառողը զրկվում է մրցույթին մասնակցելու հնարավորությունից:

Հարկ է նշել, որ ինչպես գրանցման, այնպես էլ հայտի ներկայացման փուլում հիմնական խնդիրների մի մասը պայմանավորված է եղել կառույցների փորձառության պակասով ու թույլ ինստիտուցիոնալ կարողություններով: Խոչընդոտները հաղթահարելու նպատակով կառույցները կրկին դիմում են ավելի փորձառու կազմակերպություններին՝ խորհրդատվություն ու աջակցություն ստանալու նպատակով կամ պայմանագրային հիմունքով ներգրավում են համապատասխան փորձառություն ունեցող մասնագետի: Բնական է, որ փոքր ու համեմատաբար թույլ կարողություններ ունեցող կազմակերպությունների համար վերջին հանգամանքը լրացուցիչ ծախսեր է առաջացնում ու ոչ միշտ է, որ կազմակերպությունները մասնագետ ներգրավելու ու վճարովի խորհրդատվություն ստանալու համար բավարար միջոցներ ունեն:

Մասնակիցների մեծամասնությունը կայքերում տեղադրված աջակցող ու ուսուցողական նյութերը գնահատել են անարդյունավետ կամ մասնակի արդյունավետ: Ինչպես գրանցման, այնպես էլ հայտերի ներկայացման փուլերի վերաբերյալ ուսուցողական նյութերը դիտելուց հետո անգամ սպառողները հիմնականում չեն կարողացել լուծել տվյալ փուլերում առաջացած խնդիրներն ու գտնել հարցերի պատասխանները: Նյութերի և հոլովակների՝ որպես անարդյունավետության կամ նպատակին չձառայելու պատճառ, քննարկման մասնակիցները նշել են ուսուցողական նյութերի ոչ ինտերակտիվ լինելը, հարցեր ուղղելու ու պատասխաններ ստանալու անհնարինությունը գործնական կիրառության փուլում: Սպառողները հիմնականում գոհունակություն են հայտնել

www.armeps.am-ում առկա ուղեցույցից՝ որպես համակարգում կողմնորոշվելուն աջակցող ավելի մատչելի ու պարզ միջոց, մինչդեռ www.ppcm.am-ի ուղեցույցից դժգոհություններ են հայտնել՝ համարելով այն խրթին ու պակաս մատչելի:

### **Հայտի նախապատրաստում**

Հայտի նախապատրաստման փուլում արտադրողների կողմից արձանագրված խնդիրներն առնչվել են հայտում չափորոշիչների հստակեցմանը, երբ կարիք է առաջանում երկար ժամանակ ծախսել, որպեսզի հայտում ներկայացված տեղեկատվությունը լինի սպառիչ ու բավարար, ինչը և հանգեցնում է սպառողների կողմից ավելի որակյալ հայտերի ներկայացմանը:

Մպառողների կողմից բարձրաձայնված խնդիրները վերաբերվում են հետադարձ կապի ապահովմանը ու հայտի նախապատրաստման փուլում լրացուցիչ տեղեկատվության հավաքագրմանը: Այսպես, օրինակ՝ սպառողների մեծ մասը գերադասում է հարցեր ունենալու ժամանակ զանգերի միջոցով կատարել հստակեցումներ, որպեսզի հետո ժամանակ ունենան արագ փոփոխություններ կատարելու համար: Գրավոր հարցուպատասխանի հնարավորությունը սպառողները հիմնականում համարում են անարդյունավետ, քանի որ.

- 1) Մահմանված վերջնաժամկետները հաճախ ներառում են ոչ աշխատանքային օրեր (շաբաթ-կիրակի), ինչը զգալիորեն նվազեցնում է պատասխանը ստանալուց հետո համապատասխան տեղայնացումներ կամ փոփոխություններ կատարելու հնարավորությունները: Մասնավորապես, կարիք է առաջանում կատարել լրացուցիչ հարցումներ, գնի հստակեցումներ, որի արդյունքում բարդ է դառնում վերջնաժամկետում հայտի ամփոփումն ու ներկայացումը:
- 2) Հեռախոսազանգի միջոցով հարցերն ուղղելու ժամանակ պատասխանող կողմը ոչ միշտ է տեղեկացված լինում հայտին վերաբերվող մանրամասներից, լինում են բազմաթիվ ուղղորդումներ, այդ թվում՝ դեպի այլ ավելի շատ փորձառություն ունեցող մասնագետների, այլ կերպ ասած՝ դեպի այլ հայտ ներկայացնող կազմակերպությունների ներկայացուցիչների:

*«... այս մասով միշտ հետադարձ կապը վատ է ու սպասում են, որ անընդհատ, վարչարարությունից ելնելով՝ չդիմես, կամ հեռախոսային զանգերը չեն վերցնում կամ գրավոր են ուզում դիմում գրվի: Մի խոսքով, պետական գրեթե բոլոր մարմինների պես»:*

*Մասնավոր հատվածի ներկայացուցիչ*

- 3) Կայքի թարմացումները և տեխնիկական վերազինման աշխատանքները երբեմն համընկնում են մրցույթի հրավերը բաց լինելու և հայտերի ներկայացման վերջնաժամկետին մոտ լինելու ժամանակահատվածի հետ, որի ընթացքում գնումների էլեկտրոնային հարթակներից օգտվելը դառնում է անհնար: Ի դեպ, թարմացումները տեղի են ունենում առանց նախապես տեղեկացնելու կամ առանց հայտարարության, որը կրկին խնդիրներ է առաջացնում հայտը ներկայացնելու տեսանկյունից:

### **Մրցույթի հայտերի դիտարկում և արդյունքների ամփոփում**

Այս փուլի հետ կապված հիմնական դիտարկումները վերաբերվել են պայմանագրի գեներացմանը: Մինչդեռ հարթակները հնարավորություն են տալիս ունենալ պայմանագրի օրինակելի ձևանմուշ, դեռևս բավականին ժամանակատար է այդ օրինակելի ձևում փոփոխություններ կատարելու գործընթացը, մինչդեռ համակարգում արդեն իսկ ներբեռնված է այնպիսի տեղեկատվություն, որն ավտոմատ գեներացվելու պարագայում թույլ կտա ժամանակ ու ռեսուրսներ խնայել: Հարկ է նշել, որ արտադրողները նաև անարդյունավետ են համարել աճուրդի ժամանակ մեկ մասնակցի

պարագայում մրցույթի չեղարկումը՝ կրկին հաշվի առնելով այդ գործընթացը կազմակերպելու վրա ներդրվող ռեսուրսն ու ժամանակը: Նման խնդիր չի առաջանում էլեկտրոնային աճուրդի դեպքում, քանի որ ավտոմատ կարգով դիտարկվում է երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցի հայտը՝ առաջին մասնակցի՝ համապատասխան պայմաններին չբավարարելու պարագայում:

Սպառողները հիմնականում արդյունավետ են համարել արդյունքների ամփոփման ու պայմանագրի կնքման փուլերում հարթակների կողմից առաջարկվող հնարավորություններն ու այս գործընթացին տրամադրված ժամանակահատվածը: Առանձնահատուկ խնդիրներ չեն արձանագրվել նաև շտկումներ կատարելու գործընթացները հարթակների միջոցով կառավարելու տեսանկյունից: Միակ արձանագրված խնդիրը վերաբերվում է մինչ պայմանագրի կնքումը սև ցուցակում հայտնվելու հանգամանքի առկայությանը՝ շտկումների պահանջին հատկացված ժամանակահատվածի ընթացքում չպատասխանելու կամ հանձնաժողովի պահանջներին նշված ժամանակահատվածում չարձագանքելու դեպքում:

### **Այլ հնարավորություններ**

Այս բաժնում ուսումնասիրվել է հարթակների միջոցով բողոքարկման, արձանագրությունների ու հաշվետվությունների, ինչպես նաև գնումների պլանների ուսումնասիրությունների հետ կապված փորձառությունը: Նշենք, որ այս հնարավորություններից թերևս օգտվել են սպառողների սակավաթիվ կազմակերպություններ ու կառույցներ: Քիչ օգտվելու պատճառներից են նման հնարավորությունների մասին իրազեկված չլինելը, դրանցից օգտվելու հնարավորությունները չգիտակցելը կամ չիմանալը, ինչպես նաև համապատասխան կարողությունների պակասը: Այն եզակի սպառող կազմակերպությունները, որոնք օգտվել են այս հնարավորություններից, հիմնականում փորձառություն ունեն մոնիթորինգային ծրագրերի շրջանակներում կամ դատական գործընթացներ նախաձեռնելու ժամանակ. միայն մեկ դեպքում է կազմակերպություններից մեկը դիտարկել արձանագրությունները, երբ չի շահել մրցույթը, որպեսզի կարողանա դասեր քաղել և ավելի պատրաստված մասնակցություն ունենալ կայանալիք հետագա մրցույթներում: Այն սակավաթիվ կառույցները, որոնք օգտվել են հարթակից, կրկին արձանագրում են որոնման համակարգի հետ կապված խնդիրը: Այլ հատուկ դժվարություններ չեն արձանագրվել:

*«Շուկայի վերլուծություն անելու համար գնումների պլանը շատ լավ տեղեկատվություն է, սակայն նորից որոնման համակարգի անկատարությունը բարդացնում է այդ գործընթացը»:*

*Մասնավոր հատվածի ներկայացուցիչ*

## **Գլուխ 2. Էլեկտրոնային համակարգերի միջոցով պետական գնումների մասնակցելու դրդապատճառները**

Ուսումնասիրության մասնակցած կազմակերպությունները նշել են, որ հետաքրքրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- 1) մասնավոր/բիզնես կառույցների դեպքում՝ ծառայությունների և ապրանքների մատակարարում, որի արդյունքում կազմակերպությունը կամ ընկերությունը շահույթ է ստանում, այսինքն՝ բիզնես նպատակներից ելնելով,
- 2) հասարակական կազմակերպությունների դեպքում, որոնք մասնակցում են ծառայությունների մատուցման մրցույթներին, հիմնական դրդապատճառը հավելյալ ֆինանսական ռեսուրսների ներգրավումն է՝ առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացման, ինչպես նաև խոցելի խմբերին մատուցվող ծառայությունների շարունակականությունն ապահովելու նպատակով,
- 3) պետական գնումների պարագայում կազմակերպություններն ունենում են համեմատաբար երկարաժամկետ պայմանագրեր, կարողանում են կանխատեսել պայմանագրի ժամանակահատվածում կազմակերպության կամ կառույցի մուտքերն ու ելքերը, ինչպես նաև եկամուտը,
- 4) պետական կառույցների հետ հաստատվում են կապեր ու գործընկերային հարաբերություններ, ձեռք է բերվում ճանաչում ու վստահություն համապատասխան ոլորտում, ինչը լավ հիմք է տարբեր կառույցների ու կազմակերպությունների հետ հետագա համագործակցության համար,
- 5) Էլեկտրոնային համակարգի միջոցով գնումների իրականացումը նվազեցնում է հայտի նախապատրաստման ու ներկայացման հետ կապված ժամանակի ու ֆինանսական ռեսուրսների ներդրումը:

*«Օրինակ, եթե մրցույթը Կապանում է, իսկ մենք Երևանում ենք գործում, ապա կարիք չի լինում թղթերը հասցնել Կապան, որպեսզի մասնակցենք մրցույթին»:*

*Մասնավոր հատվածի ներկայացուցիչ*

Պետական գնումներին չմասնակցելու պատճառները հետևյալն են.

- 1) Հարթակներից օգտվելը քիչ փորձառություն ունեցող կազմակերպությունների համար բարդ է՝ անգամ ուղեցույցների առկայության պարագայում: Շատ քիչ է նմանատիպ կարողությունները զարգացնելուն ուղղված հատուկ դասընթացներին մասնակցելու հնարավորությունը, ինչը դեմ առ դեմ հարցեր ուղղելու հնարավորություն կընձեռի,
- 2) Գրանցման հետ կապված բարդություններից հետո մի քանի կազմակերպություն որոշում է կայացրել չշարունակել գործընթացը ու չմասնակցել մրցույթին,
- 3) Որոշ դեպքերում մրցույթի հայտը, հայտարարությունը բարդ ու խրթին է ձևակերպված, իսկ պարզաբանումների հնարավորություն չլինելու պարագայում մրցունակ հայտի նախապատրաստումն ու ներկայացումը դիտարկվում է անիմաստ ջանք,
- 4) Հայտի ներմուծումը համակարգ երբեմն բարդ ու երկարատև ջանք է պահանջում, հատկապես երբ հայտի տեղադրման, ներկայացման ժամանակահատվածում տեղի են



ունենում կայքի թարմացումներ և տեխնիկական վերազինման աշխատանքներ,

- 5) Որոնման համակարգի միջոցով չի հաջողվել գտնել մրցույթը, որին մասնակցելու հետաքրքրություն են ունեցել,
- 6) Գրանցված կազմակերպությունները որոշ դեպքերում չեն ստացել ծանուցում էլ. նամակի միջոցով, ինչի արդյունքում բաց են թողել մրցույթի հայտարարությունները, որոնցում ունեին հետաքրքրվածություն,
- 7) Մի շարք կազմակերպություններ ունեն իրազեկվածության ու կարողության բաց՝ առհասարակ պետական գնումներին մասնակցելու հնարավորությունների ու կարգի, մասնավորապես՝ էլեկտրոնային համակարգի միջոցով պետական գնումներին մասնակցելու հնարավորությունների վերաբերյալ:

## Եզրակացություն

Նորաստեղծ կամ պետական գնումներին մասնակցության փորձառություն չունեցող կազմակերպությունների համար գնումների էլեկտրոնային հարթակներից օգտվելու հիմնական խոչընդոտ կամ մարտահրավեր է հանդիսանում կարողությունների պակասը, ինչպես նաև պետական գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության ու կարգավորումների, կազմակերպման ձևերի ու հարթակների վերաբերյալ իրազեկվածության պակասը:

Էլեկտրոնային գնումների համակարգը բավարար չափով չի լուսաբանվում: Հավանական սպառողների մի ստվար զանգված նույնիսկ չգիտի այսպիսի համակարգի գոյության մասին, ուստի համակարգի զարգացման համար անհրաժեշտ է դրա լուսաբանման գծով աշխատանքներ իրականացնել:

Պետական գնումներին մասնակցելու փորձառություն ունեցող կազմակերպությունները հիմնականում բավարարված են էլեկտրոնային համակարգի կիրառմամբ, քանի որ այն կրճատում է մրցույթի նախապատրաստմանն ու հայտի ներկայացմանն ուղղված ռեսուրսները՝ ինչպես մարդկային, այնպես էլ նյութական:

Արտադրողները հիմնականում բավարարված են էլեկտրոնային համակարգի միջոցով գնումների կազմակերպման գործընթացով: Հիմնական խոչընդոտները վերաբերվում են ավտոմատացված կերպով համակարգում արդեն իսկ ներմուծված տեղեկատվության գեներացմանը, օրինակ՝ պայմանագրերի մշակման փուլում շահող կազմակերպության տվյալների ավտոմատ ներմուծումը տվյալների բազաներից՝ այդ թվում՝ մրցույթին ներկայացված հայտից:

Հարթակներից օգտվելու ուսումնական նյութերն ու ուղեցույցները հիմնականում անարդյունավետ են, քանի որ ինտերակտիվ չեն, չունեն գործնական հատված, բացակայում է հարցեր ուղղելու հնարավորությունը: Մա հանգեցնում է հեռախոսային հաղորդակցության միջոցով պարզաբանումներ ստանալու պրակտիկային, ինչը ցանկալի չէ մի քանի նկատառումներից ելնելով՝ ժամանակի ծախս թե՛ արտադրողների, թե՛ սպառողների համար, հարթակներում առկա հաղորդակցման հնարավորության համար ներդրված ռեսուրսի անարդյունավետություն, մրցույթին վերաբերվող հարցերի պարագայում՝ հնարավոր շահերի բախում ու ոչ հավասար պայմաններ տարբեր մասնակիցների համար:

Հարթակների ծրագրային թարմացումները և տեխնիկական վերազինման աշխատանքներն ու դրանց վերաբերյալ նախապես չտեղեկացնելը հաճախ հանգեցնում են օգտատերերի մրցունակ հայտեր ներկայացնելու հնարավորությունների սահմանափակմանը:

Էլեկտրոնային նամակների միջոցով ծանուցման համակարգը բարելավման կարիք ունի: Ծանուցումներ չստանալը գրանցման, նոր մրցույթի հայտարարության տեղադրման կամ այլ դեպքերում նվազեցնում է սպառողների՝ մրցույթներին մասնակցելու հավանականությունը, ինչպես նաև որակյալ առաջարկներ ստանալու հնարավորությունը:

Որոնման համակարգն անարդյունավետ է, ինչը բարդացնում է ցանկալի տեղեկատվությունն արագ և հեշտությամբ գտնելու հնարավորությունը: Մա մի կողմից նորից սպառողների համար ժամանակի ու ռեսուրսների լրացուցիչ ներդրում է, մյուս կողմից՝ հարթակի որոնման համակարգի վրա ներդրված հնարավորությունների անարդյունավետ օգտագործում՝ հարթակը տնօրինող կողմի համար:

Armeps էլեկտրոնային գնումների համակարգը հնարավորություն չի տալիս ստանալ համալիր վիճակագրական տվյալներ էլեկտրոնային գնումների մասով: Սա խոչընդոտում է համակարգի թափանցիկությանը և արդյունավետությանը:

## Առաջարկություններ

Հետազոտության ընթացքում հավաքագրված տվյալների, իրականացված ուսումնասիրությունների և արձանագրած բացահայտումների հիման վրա առաջարկվում են պետական գնումների էլեկտրոնային համակարգերի կիրառության դյուրինության բարելավմանն ուղղված հետևյալ հիմնական գործողությունները:

- 1) Իրականացնել պետական գնումների էլեկտրոնային համակարգի լուսաբանման ծրագրեր: Դիտարկել լուսաբանելու հարցում նոր մոտեցումների ներդրումը, տաբեր ավանդական և այլընտրանքային հարթակների հնարավորությունների օգտագործումը: Այս միջոցառումները հատկապես կարևոր են նոր գրանցվող ու պակաս փորձառություն ունեցող կազմակերպությունների ու կառույցների համար:
- 2) Մշակել ու ներդնել համակարգից օգտվելու մոդուլային տեղեկատվական նյութեր, որոնք ինտերակցիայի հնարավորություն կտան, տեսական նյութը կհամադրեն գործնական կամ գիտելիքի ստուգման առաջադրանքի հետ:
- 3) Բարելավել էլեկտրոնային հարթակների տեխնիկական կարողությունները, մասնավորապես՝ հասցեագրել գրանցման, ծանուցման, հայտերի բեռնման հետ կապված խնդիրները:
- 4) Բարելավել որոնման համակարգը, մասնավորապես՝ հնարավոր դարձնել որոնումը բանալի բառերի միջոցով իրականացնելը, ինչը թույլ կտա հեշտությամբ գտնել հետաքրքրություն ներկայացնող մրցույթի հայտարարությունը կամ կիրառել ֆիլտրելու հնարավորությունը՝ նույն նպատակին ծառայելու համար:
- 5) Բարելավել կայքում անցումներ կատարելու (նավիգացիայի) տեխնիկական լուծումները, մասնավորապես՝ «next» ֆունկցիան արդյունավետ օգտագործելու հնարավորությունները:
- 6) Բարելավել արտադրողների, հարթակները կառավարող կողմի ու սպառողների միջև հաղորդակցության որակը՝ մասնավորապես կայքի թարմացումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու, թարմացումների ժամանակահատվածի ու մրցույթի ժամկետների համադրումը համապատասխանեցնելու տեսանկյունից:
- 7) Էլեկտրոնային գնումների համակարգերի և գործընթացների օգտագործումը կարող է հանգեցնել մի շարք առավելությունների, ներառյալ՝ առանձին գնումների նվազեցված վարչական ծախսեր, ավելի արագ և ճկուն իրականացվող գնումների ընթացակարգեր, առավել մեծ թափանցիկություն և գնումների վերաբերյալ տեղեկատվության մոնիտորինգի հնարավորություն, առավել լայն վարչական արդիականացում և պարզեցում, ինչը խրախուսում է Կառավարության և ընդհանրական կարգով զանազան վարչական գործընթացների ներդրումը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների լուծումների տարածումը հասարակության մեջ:

# Հավելված 1. Ֆոկուս խմբային և ոլորտային քննարկումների հարցադրումներ

- 1) **Արտադրող** - Ի՞նչ համակարգ/հարթակ է կիրառվում էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողության համար ձեր կառույցի կողմից:
- 2) **Արտադրող** - Ինչպիսի՞ն են համակարգի օգտագործման առավելություններն ու բարդությունները տարբեր նպատակներով այն կիրառելիս՝
  - ա) պլանավորում, փնտրում, կառավարում,
  - բ) տեղեկատվության ամբողջականություն, թափանցիկություն, մատչելիություն,
  - գ) պատվիրատուների նկատմամբ նախնական վերահսկողություն,
  - դ) մասնակիցների ներգրավում:
- 3) **Արտադրող** - Ինչպե՞ս կգնահատեք գնումների կազմակերպման նպատակով ներդրված տարբեր համակարգերի նպատակահարմարությունը՝
  - ա) [www.procurement.am](http://www.procurement.am) - գնումների պաշտոնական տեղեկագիր,
  - բ) [www.armeps.am](http://www.armeps.am)
  - գ) [www.armeps.am/ppcm](http://www.armeps.am/ppcm) - հաշվետվողականության մոդուլ
  - դ) [www.e-gov.am/transparent/](http://www.e-gov.am/transparent/)
- 4) **Արդյո՞ք** գոյություն ունեցող գնման ընթացակարգերն արդյունավետ են ու բավարար՝ գնումները հաջողությամբ իրականացնելու համար (դրանց առավելություններն ու բարդությունները գործնականում).
  - ա) էլեկտրոնային աճուրդը,
  - բ) մրցույթը,
  - գ) գնանշման հարցումը,
  - դ) մեկ անձից գնումը:
- 5) **Արտադրող** - Ինչպե՞ս եք գնահատում գնումների կազմակերպման գործընթացը՝ վերը ներկայացված պլատֆորմների միջոցով շրջանակային համաձայնագրերով ապրանքներ, ծառայություններ գնելու համար:
- 6) **Արտադրող** - Ինչպե՞ս եք գնահատում առկա հարթակների միջոցով բողոքարկման համակարգի կիրառելիությունը և արդյունավետությունը: Ինչպիսի՞ն է նմանատիպ փորձը: Եթե չեք կիրառել, ապա ինչու՞ (պատճառները):
- 7) **Արտադրող** - Որքա՞ն արդյունավետ է ներդրված համակարգն աջակցում գնումների գործընթացում գնման առարկայի բնութագրերի մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացման դեպքերի բացահայտմանը և մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշների առկայության բացահայտմանը, որոնք
  - ա) նախատեսված չեն օրենքով,

բ) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը. անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին,

գ) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

8) **Արտադրող** - Ինչպիսի՞ն է գնման մասնակցի համապատասխանելիությունը՝ մրցույթին մասնակցելու պահանջներին ստուգելու պրակտիկան (ուժեղ և թույլ կողմերը):

9) **Արտադրող** - Ինչպե՞ս է կառավարվում մրցույթի ապրանքի ծառայության մասնագրերի մշակման ամբողջ ցիկլը. Մանավորապես՝ էլ. միջոցները որքանո՞վ են նպաստում դրան:

10) **Արտադրող** - Ինչպե՞ս կգնահատեք գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումների տրամադրման արդյունավետությունը:

11) **Սպասող** - Ինչպիսի՞ն է գնումների էլեկտրոնային համակարգերից օգտվելու Ձեր փորձառությունը (*դրական փորձ, մարտահրավերներ, առաջարկություններ*).

ա) գրանցում ու մուտք համակարգ,

բ) համակարգում նավիգացիա և օգտագործում,

գ) ոլորտին համապատասխանող գնման նոր հնարավորության մասին իրազեկում,

դ) փաստաթղթերի նախապատրաստում,

ե) հետադարձ կապ/հարցերի նախապատրաստական փուլ,

զ) ներկայացում,

է) տեղեկատվության ստացում արդյունքների վերաբերյալ,

ը) բողոքարկում:

### Օժանդակող հարցադրումներ

1) Ի՞նչ տարբերակով են տեղեկացվել հրավերի պայմանների մասին, ի՞նչ եղանակով են ներկայացրել հայտերը:

2) Արդյո՞ք էլեկտրոնային ձևով հաղորդակցության համար օգտագործվող միջոցները ոչ խտրական են, ընդհանուր առմամբ մատչելի են հնարավոր ցանկացած մասնակցի և փոխգործակցող՝ նրա կողմից կիրառվող տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման միջոցների հետ:

3) Ի՞նչ եղանակով և ի՞նչ ժամկետներում են տեղեկացել պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման և պայմանների վերաբերյալ:

4) Արդյո՞ք այդ պայմանը բավարար է բոլոր կազմակերպչական հարցերը լուծելու համար - անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր:

5) Որքանո՞վ են հրավերում ներկայացված պայմանները բավարար ու անհրաժեշտ գնման գործընթացին նախապատրաստվելու ու մրցունակ լինելու տեսանկյունից:

6) Արդյո՞ք գոյություն ունեցող գնման ընթացակարգերն արդյունավետ են ու բավարար գնումները հաջողությամբ իրականացնելու համար (դրանց առավելություններն ու բարդությունները գործնականում).

ա) էլեկտրոնային աճուրդը,

ա) մրցույթը,

ա) գնանշման հարցումը,

ա) մեկ անձից գնումը:

7) Արդյո՞ք օգտվում եք գնումների պլանից՝ գնումներին մասնակցելու ու նախապատրաստվելու տեսանկյունից:

8) Արդյո՞ք ունեցել եք հայտը վերանայելու ու նորից ներկայացնելու հետ կապված փորձառություն: Ինչպիսի՞ :

9) Նշեք որոնման համակարգի հետ կապված Ձեր փորձառությունը  
<https://armeps.am/ppcm/public/reports#/report/f89dce4e-1f05-4a66-aa17-c1eff8c6b70e>

10) Արդյո՞ք դիմորդները նայում են մրցակիցների կողմից տրված փաստաթղթերը, մասնակցում են հայտերի քննարկմանը և/կամ դիտում են առցանց:

11) Արդյո՞ք պարզաբանումներ ստանալու նպատակով ուղարկել եք հարցեր և որքանո՞վ են դրանք բավարար եղել մրցույթին առավելագույնս լավ ներկայանալու, շտկելու տեսանկյունից:

12) **Սպասող** - Ինչպիսի՞ փորձառություն ունեք գնումների էլեկտրոնային համակարգերի միջոցով գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումների հայտ ուղարկելու ու պատասխաններ ստանալու հետ կապված գործընթացի վերաբերյալ:

13) **Վերահսկող** - Ինչպիսի՞ն է Ձեր փորձառությունը գնումների էլեկտրոնային համակարգերի հետ կապված Ձեր գործունեությանը պայմանավորված: Ի՞նչ նպատակով/ներով եք հիմնականում օգտվում այդ համակարգերից և հարթակներից: Համակարգերի ինչպիսի՞ հնարավորություններից կամ ո՞ր բաժիններից եք հիմնականում օգտվում:

14) **Վերահսկող** - Որքա՞ն արդյունավետ եք համարում գնման ընթացակարգի արձանագրությունների և հաշվետվությունների կառավարման հնարավորությունները կայքի միջոցով՝ Ձեր նպատակներին ծառայող տեղեկատվության ստացման ու վերլուծության համար:

### Օժանդակող հարցադրումներ

1) Որքանո՞վ է կնքված պայմանագրի մասին հայտարարությունը պարունակում հետևյալ տեղեկությունները.

#### Հոդված 11

ա) գնման առարկայի համառոտ նկարագրությունը,

բ) պատվիրատուի անվանումը և հասցեն,

գ) պայմանագրի կնքման ամսաթիվը,

դ) ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և գտնվելու կամ բնակվելու վայրը,

ե) մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները և պայմանագրի գինը,

- զ) մասնակիցների ներգրավման նպատակով սույն օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները (եթե կիրառելի են),
- է) կիրառված գնման ընթացակարգը և դրա ընտրության հիմնավորումը:

15) **Վերահսկող** - Արդյո՞ք գտնում եք, որ կայքերում տեղադրվող տեղեկատվությունը, որը սահմանված է օրենքով, բավարար է թափանցիկ, հաշվետու լինելու համար կամ տարբեր լսարանների կարիքներին համապատասխանելու տեսանկյունից:

#### Օժանդակող հարցադրումներ

- 2) Ի՞նչ տեսակի տեղեկատվության կարիք եք ունենում, ու արդյո՞ք դա գտնում եք – համաձայն օրենքի կետերի.
  - ա) գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճեն,
  - բ) հաշվետվություններ, պայմանագրեր,
  - գ) գնման ընթացակարգի արձանագրություն,
  - դ) պետական գնումների տարեկան հաշվետվություն,
  - ե) գնումների որակավորված մասնագետների (անձանց) ցուցակ:

16) **Վերահսկող** - Ինչպիսի՞ փորձառություն ունեք գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը ստանալու հարցում:

Ըստ Հոդված 9 կետ 4-ի՝ պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում:



## Հավելված 2. Անհատական կիսաստանդարտացված հարցազրույցների հարցադրումներ

Իրականացման օր՝ \_\_\_\_\_

Իրականացման վայր՝ \_\_\_\_\_

Մասնակիցների նկարագրություն՝ \_\_\_\_\_

Հարցադրումներ. բովանդակություն արտադրողներ

Հարց	Նշումներ
<p>1) Ի՞նչ համակարգ, հարթակ է կիրառվում Ձեր կառույցի կողմից էլեկտրոնային գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և գնումների հաշվետվողության համար:</p>	
<p>2) Ինչպիսի՞ն են համակարգի օգտագործման առավելություններն ու բարդությունները տարբեր նպատակներով այն կիրառելիս՝</p> <p>ա) պլանավորում, փնտրում, կառավարում,</p> <p>բ) տեղեկատվության ամբողջականություն, թափանցիկություն, մատչելիություն,</p> <p>գ) պատվիրատուների նկատմամբ նախնական վերահսկողություն,</p> <p>դ) մասնակիցների ներգրավում:</p>	
<p>3) Ինչպե՞ս կգնահատեք գնումների կազմակերպման նպատակով ներդրված տարբեր հարթակների նպատակահարմարությունը՝</p> <p>ա) <a href="http://www.procurement.am">www.procurement.am</a> - գնումների պաշտոնական տեղեկագիր</p> <p>բ) <a href="http://www.armeps.am">www.armeps.am</a></p> <p>գ) <a href="http://www.armeps.am/ppcm">www.armeps.am/ppcm</a> - հաշվետվողականության մոդուլ</p> <p>դ) <a href="http://www.e-gov.am/transparent/">www.e-gov.am/transparent/</a></p>	
<p>4) Արդյո՞ք գոյություն ունեցող գնման ընթացակարգերը արդյունավետ են ու բավարար գնումները հաջողությամբ իրականացնելու համար</p>	

<p>(դրանց առավելություններն ու բարդությունները գործնականում).</p> <p>ա) էլեկտրոնային աճուրդը, բ) մրցույթը, գ) գնանշման հարցումը, դ) մեկ անձից գնումը:</p>	
<p>5) Ինչպե՞ս էք գնահատում գնումների կազմակերպման գործընթացը վերը ներկայացված պլատֆորմների միջոցով շրջանակային համաձայնագրերով ապրանքներ, ծառայություններ գնելու համար:</p>	
<p>6) Ինչպե՞ս էք գնահատում բողոքարկման համակարգի կիրառելիությունը և արդյունավետությունը համակարգերի միջոցով: Ինչպիսի՞ն է նմանատիպ փորձը: Եթե չէք կիրառել, ապա ինչու՞ (պատճառները):</p>	
<p>7) Որքա՞ն արդյունավետ է ներդրված համակարգն աջակցում գնումների գործընթացում գնման առարկայի բնութագրերի մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացման դեպքերի բացահայտմանը և մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշների առկայության բացահայտմանը, որոնք</p> <p>ա) նախատեսված չեն օրենքով, բ) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ գ) պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, դ) համարժեք չեն, ուղղակիորեն չեն բխում պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:</p>	
<p>8) Ինչպիսի՞ն է գնման մասնակցի համապատասխանելիությունը մրցույթին մասնակցելու պահանջներին ստուգելու պրակտիկան (ուժեղ և թույլ կողմերը):</p>	
<p>9) Ինչպե՞ս է կառավարվում մրցույթի ապրանքի</p>	

<p>ծառայության մասնագրերի մշակման ամբողջ ցիկլը գնումների էլեկտրոնային համակարգերի միջոցով, մասնավորապես որքանով են էլեկտրոնային միջոցները նպաստում դրան:</p>	
<p>10) Ինչպե՞ս կգնահատեք գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումների տրամադրման արդյունավետությունը:</p>	

## Գրականություն

- ՀՀ Կառավարություն, 2001: ՀՀ Կառավարության որոշում N 1267 «Մրցույթի հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգը, գնումների բնութագրերի հաստատման, նախնական հսկողության և ֆինանսավորման կարգը, գնումների ընթացակարգերի արձանագրությունների ստուգման կարգը, մեկ աղբյուրից գնումներ կատարելու ձևով՝ գնանշման միջոցով գնումների իրականացման կարգը, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական գնումների գործակալության գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 16-ի N 572 որոշման մեջ լրացում կատարելու մասին», Երևան <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=9086>
- ՀՀ Ազգային ժողով, 2016: Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգիրք, Երևան <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143894>
- Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության կանոնադրություն <https://www.minfin.am/hy/page/kanonadrutyuny/>
- ՀՀ Ազգային ժողով, 1997: ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», Երևան <https://www.arlis.am/documentview.aspx?docid=140926>
- ՀՀ Կառավարություն, 2006: ՀՀ Կառավարության որոշում N 137-Ն «Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությունը հաստատելու մասին», Երևան <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=14388>
- ՀՀ Կառավարություն, 2017: ՀՀ Կառավարության որոշում N 534-Ն «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին», Երևան <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=138560>
- ՀՀ ֆինանսների նախարար, 2012: Հրաման թիվ 1169-Ն «Պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների ընտրանքային գնահատման և գնումների վերաբերյալ տվյալների վերլուծության և էլեկտրոնային տեղեկատուի վարման կարգերը հաստատելու մասին», Երևան <https://www.arlis.am/documentview.aspx?docid=98121>

## Աբստրակտ

Պետական գնումների համակարգի արդյունավետության բարձրացմանն աջակցելու նպատակադրությամբ սույն հետազոտության շրջանակներում մանրամասն ուսումնասիրվել են ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի կիրառման դյուրինությանը վերաբերող խնդիրները, որոնց շուրջ արձանագրված բացահատումների և կատարված եզրակացությունների հիման վրա մշակվել են դրանց մատչելիության բարելավմանն ուղղված համապատասխան առաջարկություններ:

Աշխատանքի տեսական և տեղեկատվական հիմքը կազմել են պետական գնումների ոլորտին վերաբերվող ՀՀ օրենքներն ու իրավական ակտերը, գնումների էլեկտրոնային հարթակները: Ուսումնասիրության համար տեսական հիմք են ծառայել տարբեր հետազոտողների աշխատությունները, միջազգային կազմակերպությունների և փորձագետների հետազոտությունները արդյունքներն ու հրապարակումները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ֆինանսների նախարարության և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալները, ինչպես նաև վերը նշված կառույցների էլեկտրոնային կայքերում տեղ գտած տեղեկատվությունը:

Հետազոտության շրջանակներում, ելնելով հետազոտության հիմքում դրված հիմնական խնդիրներից, արձանագրվել են հետևյալ հիմնական արդյունքները.

- 1) Մանրամասն ուսումնասիրվել են ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի (<https://www.gnumner.am/>, <https://www.armepps.am/>, <https://www.ppcm.am/>) կիրառման դյուրինությունը երեք օգտատերերի՝ արտադրողների, սպառողների և վերահսկողների տեսանկյունից:
- 2) Ուսումնասիրվել են պետական գնումներին մասնակցելու և չմասնակցելու մոտիվացիաներն ու պատճառները:
- 3) Արձանագրված բացահայտումների և արդյունքների հիման վրա մշակվել է ՀՀ պետական գնումների էլեկտրոնային համակարգերի մատչելիության բարելավմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:
- 4) Մշակված առաջարկությունների փաթեթը գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով ներկայացվել է ոլորտային քաղաքականության մշակման ոլորտում շահագրգիռ պետական կառավարման համակարգի կառույցներին:

**Բանալի բառեր.** պետական գնումների համակարգ, պետական գնումներ, գնումների էլեկտրոնային համակարգ, բյուջետային միջոցներ, պետական ծախսերի կառավարում, ARMEPS

## Abstract

In order to support the increasement of the efficiency of the Public Procurement System, within the framework of this research, the issues related to accessibility and convenience of use of the Electronic Public Procurement Systems of the Republic of Armenia were studied in details.

The theoretical and informational basis of the work was the RA laws and legal acts related to the field of the public procurement, as well as the electronic procurement platforms. The theoretical basis for the study was the work of various researchers, the results and publications by international organizations and experts. The information base for the research was the data published by the RA Ministry of Finance and the RA National Statistical Service, as well as the information contained in the websites of the above-mentioned institutions.

Within the framework of the research, based on the main problems underlying the research, the following main results were identified:

- 1) The accessibility and convenience of use of the RA Public Procurement Electronic Systems (<https://www.gnumner.am/>, <https://www.armepe.am/>, <https://www.ppcm.am/>) were studied in details by three users: from the point of view of producers, consumers and controllers.
- 2) The motivations and reasons for not participating in the public procurement were studied.
- 3) Based on the results of the identified revelations, a package of proposals aimed at improving the accessibility of the RA Public Procurement Electronic Systems has been developed.
- 4) The developed package of proposals through cooperation with partner organizations was submitted to the institutions of the Public Administration System interested in the field of sectoral policy development.

**Keywords:** public procurement system, public procurement, electronic procurement system, budget resources, public expenditure management, ARMEPS